

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 10/3

15 մարտի 2016 թ.

Քննարկվեց «Ապարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ 12.02.2016թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 22.01.2016թ-ի թիվ 15/04 և հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու մասին 09.02.2016թ-ի թիվ 032065 որոշումների դեմ:

«Ապարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ գանգատում բերված փաստարկները.

22.01.2016թ-ին «Ապարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ (այսուհետ նաև ընկերություն) ստացել է ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի հարկային պարտավորությունները գանձելու մասին թիվ 15/04 որոշումը, որով առաջադրվել է վճարման ընդհանուր առմամբ մոտ 8 միլիոն ՀՀ դրամ պարտավորություն: Սոցիալական վճարի գծով պարտավորությունը կազմել է 2.374.021 ՀՀ դրամ: Հարկային պարտավորություններն ամբողջությամբ կատարվել են, բացի սոցիալական վճարից: Այսուհետև, ընկերության գույքի, այդ թվում՝ բանկային հաշիվների և դրամարկղի վրա 09.02.2016թ. թիվ 032065 որոշմամբ կիրառվել է արգելանք:

Գանձման որոշմամբ առաջադրված սոցիալական վճարի գումարն անհիմն է, ընկերությունն այդ պարտականությունը չունի, քանի որ ինչպես գանձման որոշմամբ է նշված, այդ գումարն առաջացել է 2014թ. հուլիսից սկսած, սակայն ընկերության կողմից «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի համաձայն 2014թ. սեպտեմբեր ամսին հարկային տեսչությունում մուտքագրվել է համապատասխան դիմում՝ սոցիալական վճարից հրաժարվելու մասին, որի ներկայացման ժամկետը եղել է մինչև 2014թ. դեկտեմբերի 25-ը: Սակայն, հարկային տեսչությունն անտեսելով ընկերության կողմից ներկայացված դիմումը շարունակել է ընկերության նկատմամբ կիրառել վճարման ոչ ենթակա սոցիալական վճարի գումարներ: Արդյունքում, կուտակվել է գանձման որոշմամբ առաջադրված գումարը, որի պատճառով ընկերության գույքը գտնվում է արգելանքի տակ:

Հիմք ընդունելով վերը նշվածը՝ ընկերությունը խնդրում է վերանայել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի թիվ 15/04 որոշումը, քանի որ որոշմամբ առաջադրված բոլոր պարտավորությունները վճարված են և որպես հետևանք չեղարկել թիվ 032065 արգելանքի որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով «Ապարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 21.01.2016թ-ի դրությամբ ընկերության չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 7.989.657 դրամ, որից բնապահպանական

վճարի գծով՝ 24.540 դրամ, եկամտային հարկի գծով՝ 5.591.096 դրամ, սոցիալական վճարի գծով՝ 2.374.021 դրամ:

Նշված պարտավորություններն առաջացել են 2015թ-ի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների եկամտային հարկի, 3-րդ եռամսյակի բնապահպանական վճարի, 2014թ-ի հուլիսից մինչև 2015թ-ի դեկտեմբեր ամիսների եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվարկներով առաջացած գումարներն օրենքով սահմանված ժամկետներում չվճարելու հետևանքով:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 22.01.2016թ-ին ընդունվել է թիվ 15/04 որոշումը (այսուհետ նաև Որոշում) «Ապարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից 7.989.657 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով Որոշմամբ գանձման առաջադրված պարտավորությունների մասամբ կատարելու հանգամանքը, ՀՀ ֆինանսների նախարարի կողմից 05.02.2016թ-ին հրապարակվել է թիվ ԱՀ 032065 հանձնարարագիրը, որի հիման վրա 09.02.2016թ-ին կայացվել է հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու մասին թիվ 032065 որոշումը: Վերջինովս արգելանք է դրվել ընկերությանը պատկանող գույքի վրա՝ գումարով 3.234.868 դրամի չափով:

Քննարկվող դեպքում Որոշմամբ սոցիալական ապահովության գծով գանձման առաջադրված պարտավորությունները կազմում են 2.374.021 դրամ և առաջացել են 2014թ-ի հուլիսից մինչև 2015թ-ի դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում ընկերության կողմից ներկայացված եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվարկներով առաջացած գումարները օրենքով սահմանված ժամկետներում չվճարելու հետևանքով: Մասնավորապես, ընկերության կողմից համաձայն «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 81-րդ հոդվածի 19.09.2014թ-ին դիմում է ներկայացվել 2014թ. մինչև 2017թ. հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածի համար սոցիալական վճար կատարելու պարտականությունից հրաժարվելու մասին դիմումի: Արդյունքում, Աշտարակի ՏՀՏ կողմից դիմումում նշված անձանց նկատմամբ 2014թ-ի հոկտեմբերի 1-ից սկսած սոցիալական վճարի գումարներ չեն հաշվարկվել:

Տվյալ դեպքում ընկերությունը պնդում է, որ դիմումում նշված անձանց նկատմամբ 2014թ-ի հուլիսից մինչև 2014թ-ի սեպտեմբեր ամիսը ներառյալ սոցիալական վճարի գումարներ չպետք է հաշվարկվեին:

Ընկերության նշված պնդումը հիմնավոր չէ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 81-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի համաձայն՝ անձը իրավունք ունի վերոնշյալ օրենքի ուժի մեջ մտնելուց մինչև 2017 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածի համար հրաժարվելու սոցիալական վճար կատարելու պարտականությունից՝ մինչև 2014 թվականի դեկտեմբերի 25-ը հարկային մարմնին համապատասխան դիմում ներկայացնելու միջոցով: Նույն մասում նշված անձը սոցիալական վճար կատարելը դադարեցնում է աշխատավարձից՝ համապատասխան դիմումը ներկայացնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

Քննարկվող դեպքում սոցիալական վճար կատարելու պարտականությունից հրաժարվելու մասին դիմումն ընկերության կողմից ներկայացվել է 19.09.2014թ-ին: Հետևապես, վերոգրյալ իրավանորմի դրույթների համաձայն 2014թ-ի հուլիս ամսից

մինչև 2014թ-ի սեպտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում ընկերության կողմից պետք է սահմանված կարգով հաշվարկվեին և վճարվեին սոցիալական վճարի համապատասխան գումարները:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Ղ ՈՒ Մ Է՝

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 22.01.2016թ-ի թիվ 15/04 և հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու մասին 09.02.2016թ-ի թիվ 032065 որոշումները թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ